# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
# ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.08.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2021/191**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.07.2021թ. թիվ 26/26-1/11725-2021 գրությամբ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 16.07.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/1363-21 գրության հիման վրա 21.07.2021թ. թիվ 26/26-1/11725-2021 գրությամբ նախաձեռնել է «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Կ.Ս.Լ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 05.08.2021թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ն:

«Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00168174, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տ. Պետրոսյան 40/2, 75 ոչ բնակելի տարածք, հեռ.՝ +374 41 478808; էլ. փոստի հասցե՝ akeroby252@gmail.com) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ընթացակարգին մասնակցության դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1-ի, իրական շահառուների վերաբերյալ աղյուսակում բացակայում է մասնակցի իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, միաժամանակ՝ ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը թերի է կազմված, մասնավորապես՝ բացակայում է կշիռներին վերաբերող սյունակը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի կողմից 13.07.2021թ.-ի դրությամբ գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ

տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ըստ նույն հոդվածի նույն մասի՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին

մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնրում ենք նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովի կողմից շտկման պահանջը կրում է ձևական բնույթ և հանդիսանում ձևական վարչարարության դրսևորում:

Այսպես, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Հավելված 1-ի, իրական շահառուների վերաբերյալ աղյուսակում բացակայում է մասնակցի իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը: Մինչդեռ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած անձը հաստատող փաստաթղթի համարից ակնհայտ է դառնում, որ խոսքը գնում է անձնագրի, այլ ոչ թե նույնականացման քարտի մասին, ինչը, ըստ էության, բավարար է պնդելու համար, որ ներկայացվել է անձնագրի համար:

Գտնում ենք, որ իրավաչափ չէ գնահատող հանձնաժողովի դիրքորոշումը առ այն, որ ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը թերի է կազմված, քանի որ բացակայում է կշիռներին վերաբերող աղյուսակը: Ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն համապատասխանում է ներկայացվող պահանջներին, կշիռները պահպանված են, հաշվարկը կատարվել է ճիշտ, իսկ ծավալաթերթ-նախահաշվի ընդհանուր գինը համապատասխանում է ներկայացված գնայի առաջարկի թվին: Ուստի նման պարագայում կշիռների աղյուսակ պահանջելը, իսկ այնուհետև դրա բացակայության հիմքով հայտը մերժելը, նույնպես հանդիսանում է ձևական վարչարարության դրսևորում:

Միևնույն ժամանակ գտնում ենք, որ իրավաչափ չէ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի տվյալները ներկայացնելը՝ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, քանի որ շտկում չկատարելը, ՍՊԸ-ի կարծիքով չի կարող դիտարկվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում:

Մասնավորապես, Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին

հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ներկայացված վերլուծությունը վկայում է, որ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ն թույլ չի տվել Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով նախատեսված որևէ խախտում, որի պարագայում ՍՊԸ-ին կարելի է վերագրել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության որևէ խախտում, ուստի և առկա չեն «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/191 ընթացակարգի շրջանակներում 28.07.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

**3. <u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.07.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/1363-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի հուլիսի 9-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 09:00-ին տեղի է ունեցել ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00168174, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տ. Պետրոսյան 40/2, 75 ոչ բնակելի տարածք, հեռ.՝ +374 41 478808; էլ. փոստի հասցե՝ akeroby252@gmail.com) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ընթացակարգին մասնակցության դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1-ի, իրական շահառուների վերաբերյալ աղյուսակում բացակայում է մասնակցի իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, միաժամանակ՝ ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը թերի է կազմված, մասնավորապես՝ բացակայում է կշիռներին վերաբերող սյունակը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 09.07.2021թ.-ին համակարգի միջոցով՝ ծանուցմամբ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի կողմից 13.07.2021թ.-ի դրությամբ գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/191 ընթացակարգի շրջանակներում 28.07.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/191 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/191 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 09.07.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցության դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1-ի, իրական շահառուների վերաբերյալ աղյուսակում բացակայում է մասնակցի իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը թերի է, մասնավորապես՝ բացակայում է կշիռներին վերաբերող սյունակը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 09.07.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ 13.07.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.07.2021թ. թիվ 26/26-1/11725-2021 գրությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 16.07.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/1363-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

***ա. խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը ***կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո

գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 09.07.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցության դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1-ի, իրական շահառուների վերաբերյալ աղյուսակում բացակայում է մասնակցի իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը թերի է, մասնավորապես՝ բացակայում է կշիռներին վերաբերող սյունակը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն

առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 09.07.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ 13.07.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով, անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ծավալաթերթ-նախահաշվի փաստաթղթում կշիռներին վերաբերող սյունակը բացակայելը որպես անհամապատասխանություն արձանագրելուն, հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերով մասնակցի կողմից հայտով ծավալաթերթ-նախահաշվի փաստաթղթում կշիռներին վերաբերող սյունակ լրացնելու և ներկայացնելու պահանջ սահմանված չէ, հետևաբար նման պայմաններում անհամապատասխանություն արձանագրելն ու այն չշտկելու հիմքով Ընկերության հայտն անբավարար գնահատելն ու մերժելը չեն կարող լինել իրավաչափ:

Ինչ վերաբերում է որպես անհամապատասխանություն արձանագրված մյուս կետին, այն է՝ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցության դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն Հավելված 1-ի, իրական շահառուների վերաբերյալ աղյուսակում բացակայում է մասնակցի իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, ապա հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1-ի՝ դիմում հայտարարության ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ աղյուսակում նշված AH0427910 համարը հանդիսանում է անձնագրի սերիա և համար, այսինքն՝ թեև աղյուսակում նշվել է անձը հաստատող փաստաթղթի տեսակը լրացնելու պահանջ, այնուամենայնիվ տվյալ դեպքում Ընկերության կողմից այն չնշելը չի կարող դիտարկվել որպես խախտում:

Նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերության դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.07.2021թ. թիվ 26/26-1/11725-2021 գրությամբ «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**